Պոլիս կը հասնի (Ժամանակագրութիւն էջ 175) Հռոմէն Զաքարիա Վանեցին, որ Մելքիսեդեկ կաթողիկոսի կողմէն Հռոմ ղրկուած էր, և 1611 Յունիսին Կ. Պոլիս գալով, անկէ անցած էր Հռոմ, ուր հասած էր 1611 Օգոստոսին։

Հոն եօթը ամիս մնալէ յետոյ 1612 Մարտ 27ին Ծաղկազարդի օրը՝ առանց զատկական հանդէսներուն սպասելու՝ անիկա ստիպուած էր մեկնիլ Հռոմէն, վասնզի, ինչպէս իրեն Կ. Պոլսէն ուղեկցող Սիմէոն դպիր Լեհացի կը գրէր, «մեծ խռովութիւն եւ շփոթ անկաւ Զաքարիա վարդապետին հետ իւր հաբեղից՝ վասն ղիրք եւ անզգամ կնոջ մի որ շրջեր ընդ նոսա, կոյս եւ հաւատվոր անուանելով զինքն, մինչ չար համբաւս այս եհաս ականջս Փարիսի, զոր հրամայեաց նոցն աւուրն եղանել Հռոմայ, եւ եր Ծաղկազարդին շաբաթն» (ՀԱ. 1934 էջ 69)։

Հակառակ ասոր սակայն Պապը անոր կուտայ առ Մելքիսեդեկ կաթողիկոս ուղղուած թուղթ մը և նուէրներ, որոնք Զաքարիա առնելով կը դառնայ Կ. Պոլիս, և ինքն հոն կը մնայ, և նուէրները կը ղրկէ կաթողիկոսին, և կը հաղորդէ Պապին, վասնզի Կ. Պոլսոյ մէջ անիկա բոլորովին մոռցաւ իր պաշտօնը և Խուլին և Դարանաղցիի միանալով մեծ խռովութեան պատճառ եղաւ։